

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
վիճակագրության պետական խորհրդի նիստի

11.05.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ.Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ս.Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Կ.Կույումջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` հինգ հարց.

1. «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող` Լ.Պետրոսյան/

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001թ. մայիսի 29-ի թիվ 26 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող` Լ.Պետրոսյան/

3. «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հայաստանի Հանրապետության տարածքում ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի դեպքերի մասին» Ձև թիվ 1-ԻՍ (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվական ձևը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հավանությանն արժանացնելու մասին» հարցը:

(ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 07.04.2009թ. նիստի թիվ 05 արձանագրության թիվ 01 քաղվածքի համաձայն, վարչական վիճակագրական հաշվետվական ձևը ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հետ համատեղ ենթարկվել է լրամշակման` հաշվի են առնվել նաև ՀՀ ՎՊԽ անդամների առաջարկությունները):

/Չեկուցող` Կ.Կույումջյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

4.1. Հաղորդում Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 22.03.-11.04.2009թ.տեղի ունեցած «Ֆրանսիայի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» ազակցման ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող` Կ.Կույումջյան/

5. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող` Լ.Պետրոսյան/

Որոշեցին՝

1. հավանություն տալ «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագծին` համաձայն հավելվածի,

2. «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

(Միաժամանակ որոշեցին հանձնարարել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնին ՏԳՏ դասակարգչի ներմուծման ժամանակացույցը ներկայացնել ՀՀ ԱՎԾ նախագահին` նախապես համաձայնեցնելով այն շահագրգիռ ստորաբաժանումների հետ):

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001թ. մայիսի 29-ի թիվ 26 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող` Լ.Պետրոսյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 26 արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

որոշմամբ հաստատված *III. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ* մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Խորհուրդը բաղկացած է քսանմեկ անդամից, որի կազմի մեջ մտնում են ՀՀ ԱՎԾ նախագահը (նախագահ), ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամները, ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետը (քարտուղար), ինչպես նաև պետական մարմինների, գիտակրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք: Խորհրդի անհատական կազմը հաստատում է ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը»:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հայաստանի Հանրապետության տարածքում ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի դեպքերի մասին» Ձև թիվ 1-ԻՍ (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվական ձևը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հավանությանն արժանացնելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ.Կույումջյան/

Որոշեցին՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «ՀՀ տարածքում ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի դեպքերի մասին» Ձև թիվ 1-ԻՍ (կիսամյակային) վարչական հաշվետվական ձևին և դրանում ներառված ցուցանիշների կազմին և կառուցվածքին՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

4.1. Հաղորդում Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 22.03.-11.04.2009թ.տեղի ունեցած «Ֆրանսիայի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» աջակցման ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կույումջյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ